Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. փետրվարի 25-ի թիվ 54-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ներածական մաս 3

2. Ընդհանուր մաս 4

3. Կատարողականի հաշվեքննության արդյունքներ 11

4. Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն 51

5. Առաջարկություններ.....55

I. Ներածական մաս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. մայիսի 27-ի թիվ 171-Ա որոշում (փոփոխություն՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 319-Ա որոշում)
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն
Հաշվեքննության առարկան	Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021թ. հունիսի 1-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) ՀՀ 2020թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 387,553,093.75 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 434,323,504.95 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար փաստը կազմել է 425,078,271.73 հազ. դրամ:

2020թ.-ի ընթացքում ՍԱԾ-ի կողմից Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն (ծրագրի դասիչ՝ 1225) միջոցառման շրջանակներում ճշտված պլանը կազմել է 25,765,018.5 հազար դրամ և փաստացի ծախսվել է 24,698,507.69 հազար դրամ: Ծախսման ուղղությունները ներկայացվում են ստորև աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

հազար դրամ

Անվանում	Ծրագիր/միջոցառում	Տարեկան պլան	Ճշտված պլան	Փաստացի ծախս
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն		387,553,093.75	434,323,504.95	425,078,271.73
Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն՝ այդ թվում	**1225**	-	25,765,018.50	24,698,507.69
Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառում)	**1225-12001**	-	190,400.00	182,000.00
Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	**1225-12002**	-	134,575.50	291.50
Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում)	**1225-12003**	-	518,416.00	505,036.00
Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում)	**1225-12004**	-	935,000.00	933,572.50
Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական	**1225-12007**	-	786,219.40	786,219.30

գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում)				
Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12 միջոցառում)	**1225-12008**	-	1,842,928.80	1,842,928.67
Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխ. շուկ. գոյացած դժվ. արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոն. տնտ. հետ. չեզոքացման 16 միջ.)	**1225-12009**	-	2,145,656.60	2,145,656.43
Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19)տարածման հետևանքով մանավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում)	**1225-12010**	-	9,229,339.70	8,953,170.90
Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում)	**1225-12011**	-	5,289,426.50	4,748,903.99
Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես	**1225-12012**	-	1,221,312.00	1,207,800.40

անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում)				
Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում)	**1225-12013**	-	3,087,744.00	3,050,208.00
Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խմշնդիրների առջև կանգնած Հհ քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում)	**1225-12014**	-	384,000.00	342,720.00

Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցությամբ (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառում) (1225-12001) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 1,904 շահառուի՝ 190,400.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 182,000.0 հազ. դրամ գումար 1,820 շահառուի:

Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցությունը (1225-12002) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 134,575.5 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 291.5 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 134,284.0 հազ. դրամ պակաս

տրամադրելը պայմանավորված է այլ միջոցառումներին փաստացի վերաբաշխված գումարներով:

Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) (1225-12003) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 7,974 շահառուի՝ 518,416.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 505,036.0 հազ. դրամ գումար 7,420 շահառուի:

Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում) (1225-12004) ըստ տարեկան պլանի պետք է տրամադրվեր 9,350 շահառուի՝ 935,000.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 933,572.5 հազ. դրամ գումար 9,299 շահառուի:

Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում) (1225-12007) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 450,827 շահառուի՝ 786,219.4 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 786,219.3 հազ. դրամ գումար 450,827 շահառուի:

Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12 միջոցառում) (1225-12008) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 486,434 շահառուի՝ 1,842,928.8 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում

ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 1,842,928.67 հազ. դրամ գումար 486,434 շահառուի:

Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 16 միջոցառում) (1225-12009) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 714,524 շահառուի՝ 2,145,656.6 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 2,145,656.43 հազ. դրամ գումար՝ 714,524 շահառուի:

Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում) (1225-12010) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 136,837 շահառուի՝ 9,229,339.7 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 8,953,170.9 հազ. դրամ գումար՝ 134,679 շահառուի:

Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում) (1225-12011) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 199,599 շահառուի՝ 5,289,426.5 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 4,748,903.99 հազ. դրամ գումար՝ 195,419 շահառուի:

Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական

հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում) (1225-12012) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 86,718 շահառուի՝ 1,221,312.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 1,207,800.4 հազ. դրամ գումար՝ 86,718 շահառուի:

Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում) (1225-12013) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 48,408 շահառուի՝ 3,087,744.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 3,050,208.0 հազ. դրամ գումար՝ 44,895 շահառուի:

Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խմշնդիրների առջև կանգնած ՀՀ քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում) (1225-12014) ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 5,647 շահառուի՝ 384,000.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի տրամադրվել է 342,720.0 հազ. դրամ գումար՝ 5,040 շահառուի:

Հաշվեքննության շրջանակներում ղեկավարվելով ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 33 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 24.09.2021թ. արտաքին հաստատման հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.09.2021թ. թիվ 01/71-6/6095-2021 գրության համաձայն պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել հետևյալ պատճառաբանություններով.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից գրությամբ խնդարկված տեղեկատվությունը հանդիսանում է հարկային գաղտնիք,

ինչպես նաև անձնական տվյալներ պարունակող տեղեկատվություն՝ հայտնվում է, որ բացակայում են այդ տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրելու իրավական հիմքերը, ուստի այն ենթակա չէ տրամադրման:

III. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Կառավարության 2020թ. մարտի 16-ի ''Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին'' թիվ 298-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվել է արտակարգ դրություն: Տվյալ որոշման համար հաշվի է առնվել աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերը և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքը:

Պարետի 2020թ. մարտի 17-ի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ թիվ 2 որոշման համաձայն կիրառվել են առաջին սահմանափակումները:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 4-րդ միջոցառման համար շահառուների ընտրման ժամանակահատված է նշվել մարտի 13-25-ը ընկած ժամանակահատվածը, 6-րդ և 8-րդ միջոցառումների համար՝ մարտի 13-30-ը ընկած ժամանակահատվածը, իսկ 20-րդ միջոցառման համար՝ մարտի 1-ից հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածը:

Նպատակային արդյունավետության տեսակետից պարզ չէ արտակարգ դրություն հայտարարելուց (մարտի 16-ի ժամը 18:30-ից սկսած), ինչպես նաև առաջին սահմանափակումները կիրառելուց առաջ (2020թ. մարտի 17) ընկած ժամանակահատվածը մարտի 13-ից, իսկ 20-րդ միջոցառման համար մարտի 1-ից սկսած՝ շահառուների կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներում ընդգրկելը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

1. Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցությամբ (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառում) (1225-12001)

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

1.1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառում շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 1904 շահառու՝ 190,400.0 հազ.դրամ: Ըստ ոչ ֆինանսական հաշվետվության շահառուների քանակը կազմել է 1820 շահառու, որոնց հատկացված գումարը կազմել է 182,000.0 հազ. դրամ: Ըստ ներկայացված տեղեկատվության վճարման ցուցակում ընդգրկվել են 2121 շահառուների մասով միանվագ դրամական աջակցություն ստացող 1365 անձ, որոնց հատկացվել է 212,100.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 31-ի ‘‘Կորոնավիրուսի հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու մասին’’ թիվ 418-Լ որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի համաձայն, եթե հրատապ դրամական աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում Հրատապ դրամական աջակցության գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Ստացված տեղեկատվության համաձայն վերադարձվել է 17,000.0 հազ. դրամ:

Առկա է տարբերություն ոչ ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված ցուցանիշների և ստացված տեղեկատվությամբ վճարված և վերադարձված գումարների միջև՝ 131 շահառու, 13,100.0 հազ.դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

1.1-ին կետով *կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառման շրջանակներում հետ վերադարձված ֆինանսական միջոցների արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում եմ, որ Ծառայության պետական կենսաթոշակային համակարգի տվյալների ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության կողմից Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը, որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունների կողմից: Հայտնում եմ նաև, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել: Համապատասխան իրավական ակտով ամրագրված է եղել միայն այն դրույթը, համաձայն որի՝ եթե հրատապ դրամական աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում հրատապ դրամական աջակցության գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:*

Ըստ այդմ՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է 212,100,000 ՀՀ դրամ գումար, դրամարկղային ծախսը կազմել է 182,000,000 ՀՀ դրամ գումար, հետ է վերադարձվել 30,100,000 ՀՀ դրամ գումար:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել, ինչպես նաև այն, որ

Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է հետ վերադարձված գումարների մասին միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը (ընդհանուր 17,000.00 հազ. դրամ), որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունների կողմից, ուստի 13,100.00 հազ. դրամ հետ վերադարձված գումարների մասով անվանացանկ առկա չէ: Միաժամանակ նպատակային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի միջոցառման շրջանակներում սահմանվեին գումարների հետ վերադարձի, ինչպես նաև հետ վերադարձվող գումարների հսկողական և հետհսկողական հստակ մեխանիզմներ:

1.2. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի ‘‘Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառումը հաստատելու մասին’’ թիվ 358-Լ որոշման աջակցությունից օգտվողների սահմանափակումների վերաբերյալ 5-րդ կետը ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 9-ի թիվ 500-Լ որոշմամբ լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) ընտանիքում առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 9-ի N 500 -Լ որոշմամբ սահմանված միջոցառման շահառու»:

Տվյալ ենթակետը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 14-ի թիվ 555-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն:

Պարզ չէ տվյալ սահմանափակման ներառելը և ընդամենը 5 օր հետո ուժը կորցրած ճանաչելու նպատակայնությունը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

1.3 ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 30-ի ‘‘Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը հաստատելու մասին’’ թիվ 410-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի համաձայն միջոցառման շահառու են հանդիսանում այն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, ովքեր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվել անընդմեջ առնվազն 2020 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 13-ը ժամանակահատվածում (կամ հունվարի 1-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը չի գերազանցել 3 աշխատանքային օրը), սակայն ազատվել են աշխատանքից 2020 թվականի մարտի 13-ից մինչև մարտի 30-ը ընկած ժամանակահատվածում և այդ նույն ժամանակահատվածում չեն անցել մեկ այլ աշխատանքի:

Տվյալ սահմնափակումը 4-րդ միջոցառման մեջ ներառելով կբացառվեր կարճ ժամանակով աշխատանքի ընդունված և ազատված անձանց ներգրավումը շահառուների ցանկում, ինչը իր հերթին կբարձրացներ 4-րդ միջոցառման նպատակային արդյունվետությունը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

<u>Ծախսային արդյունավետության տեսանկյունից</u>

1.4 ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի ‘‘Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման չորրորդ միջոցառումը հաստատելու մասին’’ թիվ 358-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ

ենթակետերի համաձայն, շահառու են հանդիսանում բոլոր այն ընտանիքները, որոնց երկու ծնողները կամ ծնողներից մեկը ազատվել են աշխատանքից 2020 թվականի մարտի 13-ից մինչև 2020 թվականի մարտի 25-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածը:

Ստացված տեղեկատվության համադրումից և ուսումնասիրությունից պարզվեց, որ 4-րդ միջոցառման շրջանակներում շահառու հանդիսացած թվով 13 երեխաների ծնողներ հանդիսացել են միջոցառման շահառու, աշխատանքից ազատվել են մարտի 13-ից 25-ը ընկած ժամանակահատվածում, սակայն նրանց Հայաստանի Հանրապետությունից մեկնման վերջին սահմանահատումը եղել է մինչև 13.03.2020թ.-ը: Տվյալ ծնողներից 3 շահառուի մասով գումարի չստանալու արդյունքում այն վերադարձվել է, իսկ թվով 10 շահառուի մասով վերադարձ չի եղել՝ ընդհանուր 1,000.00 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

1.4-րդ կետի *վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 31-ի թիվ 418-Լ որոշման համաձայն՝ միջոցառման շահառու է հանդիսացել ընտանիքը (շահառուների ցանկը ձևավորվել է Պետական եկամուտների կոմիտեի կողմից), հետևապես՝ բանկերին տրամադրված վճարման ցուցակներում ներառվել են երկու ծնողի տվյալները և գումարը կարող էր վճարվել բանկ անձամբ ներկայացած ծնողին: Միաժամանակ՝ հարկ է նկատի ունենալ, որ սահմանհատման հետ կապված սահմանափակում նշված որոշմամբ նախատեսված չէ:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Միջոցառումը հանդիսացել է՝ **կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն** տրամադրելը: Մինչդեռ սահմանահատման հետ կապված սահմանափակումը նշված միջոցառման մեջ չնախատեսելը նվազեցնում է ծախսային

արդյունավետությունը՝ հաշվի առնելով այն, որ երկրում չգտնվող անձանց աշխատանքից ազատումը ինչքանով է պայմանավորված կորոնավիրուսի տնտեսական ճգնաժամով:

2. Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցությունը (1225-12002)

Նպատակային արդյունավետության տեսանկյունից

2.1. Ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունում առկա տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվեց, որ նշված միջոցառման համար ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 134,575.5 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով աջակցություն, սակայն 2020թ. ընթացքում միջոցառման շրջանակներում կատարված փաստացի ծախսը կազմել է 291.5 հազ. դրամ:

Ստացված տեղեկատվությունից պարզ չէ 291.5 հազ. դրամ ծախսի ուղղությունները և հիմքերը, ինչպես նաև ինչով է պայմանավորված տվյալ միջոցառման 99.9 տոկոս թերակատարումը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

2.1-ին կետով *արձանագրված 291.5 հազ.դրամ ծախսի ուղղությունների և հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է կից ներկայացվող վճարման հանձնարարագրով, իսկ տվյալ ծրագրով պլանի մացորդը՝ 134,575.5 հազ.դրամը, պայմանավորված է ՀՀ կառավարության որոշումներով կատարված պլանի վերաբաշխման հետ, որը տարվերջին վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն հարկ է նշել, որ ներկայացված վճարման հանձնարարականի համաձայն 291.5 հազ. դրամ ծախսը կատարվել է 8-րդ միջոցառման շրջանակներում, ուստի հաշվետվություններում այն պետք է ներառվեր

համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացված ծախսերի հաշվարկում:

3. Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած քաղաքացիներին միանվագ դրամական աջակցությամբ (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) (1225-12003)

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

3.1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 7974 շահառու՝ 518,416.0 հազ.դրամ: Ըստ ոչ ֆինանսական հաշվետվության շահառուների քանակը կազմել է 7420 շահառու, որոնց հատկացված գումարը կազմել է 505,036.0 հազ. դրամ: Ըստ ներկայացված տեղեկատվության վճարման ցուցակում ընդգրկվել են 8112 շահառուներ, որոնց վճարված միանվագ դրամական աջակցությունը կազմել է 551,616.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 3-ի ''Կորոնավիրուսի հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու մասին'' թիվ 460-Լ որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի համաձայն, եթե միանվագ աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Ստացված տեղեկատվության համաձայն 195 անձերից վերադարձվել է 13,260.0 հազ. դրամ:

Առկա է տարբերություն ոչ ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված ցուցանիշների և ստացված տեղեկատվությամբ վճարված և վերադարձված գումարների միջև՝ 497 շահառու, 33,320.0 հազ.դրամ:

Ստացված տեղեկատվության համաձայն 4 շահառուների մասով իրականացվել է ճշտում, ինչի արդյունքում նշված շահառուները պետք է

չընդգրկվեին ցուցակներում, մինչդեռ տվյալ շահառուները ընդգրկված են մնացել վճարման ցուցակներում և փոխանցվել է միանվագ դրամական աջակցությամբ սահմանված գումարը՝ 272.0 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

3.1-ին կետով *կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 6-րդ միջոցառման վերաբերյալ նշված անհամապատասխանությունների մասով հայտնում եմ, որ Ծառայության պետական կենսաթոշակային համակարգի տվյալների ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության կողմից Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը, որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունների կողմից: Հայտնում եմ նաև, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել:*

Ըստ այդմ՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է 551,616,000 ՀՀ դրամ գումար, դրամարկղային ծախսը կազմել է 505,036,000 ՀՀ դրամ գումար, հետ է վերադարձվել 46,580,000 ՀՀ դրամ գումար:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել, ինչպես նաև այն, որ

Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է հետ վերադարձված գումարների մասին միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը (ընդհանուր 13,260.00 հազ. դրամ), որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունների կողմից, ուստի 33,320.00 հազ. դրամ հետ վերադարձված գումարների մասով անվանացանկ առկա չէ: Միաժամանակ նպատակային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի միջոցառման շրջանակներում սահմանվեին գումարների հետ վերադարձի, ինչպես նաև հետ վերադարձվող գումարների հսկողական և հետհսկողական հստակ մեխանիզմներ:

3.2. Պարետի 2020թ. մարտի 21-ի ‘‘Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ’’ թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն արգելվել է խաղատների և բուքմեյքերական և խաղագումարով գրազի կազմակերպման գործունեության սպասարկման գրասենյակների գործունեության տեսակները:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 30-ի ‘‘Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը հաստատելու մասին’’ թիվ 410-Լ որոշման 2-րդ կետի համաձայն վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչների և այլ նմանատիպ գործունեություն ծավալողների Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք 6-րդ միջոցառման շահառու չեն հանդիսացել:

Վերը նշվածի համաձայն տվյալ ոլորտի սահմանափակումները կիրառվել են 2020թ. մարտի 21-ից, սակայն տվյալ ոլորտների աշխատակիցները չեն հանդիսացել 6-րդ միջոցառման շահառու, այն դեպքում, երբ տվյալ միջոցառման համար ժամանակահատվածը սահմանվել է մարտի 13-30-ը ընկած ժամանակահատվածը, որը իր մեջ ներառում է մարտի 21-30-ը ընկած ժամանակահատվածը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

<u>Ծախսային արդյունավետության տեսանկյունից</u>

3.3. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 30-ի ''Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը հաստատելու մասին'' թիվ 410-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի համաձայն միջոցառման շահառու են հանդիսանում այն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, ովքեր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվել անընդմեջ առնվազն 2020 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 13-ը ժամանակահատվածում (կամ հունվարի 1-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը չի գերազանցել 3 աշխատանքային օրը), սակայն ազատվել են աշխատանքից 2020 թվականի մարտի 13-ից մինչև մարտի 30-ը ընկած ժամանակահատվածում և այդ նույն ժամանակահատվածում չեն անցել մեկ այլ աշխատանքի:

Ստացված տեղեկատվության համադրումից և ուսումնասիրությունից պարզվեց, որ.

- 917 շահառուներ ընդգրկվել են վճարման ցուցակներում, որոնք ընդունվել են աշխատանքի 2020 թվականի մարտ ամսվա ընթացքում և ազատվել են 2020 թվականի մարտի 13-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Տվյալ շահառուներին վճարվել է 62,356.0 հազ.դրամ: Ընդ որում նշված 917 շահառուներից 33 շահառուներ աշխատանքի ընդունվել և ազատվել են 2020 թվականի մարտի 13-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Այս շահառուները ընդունվել և ազատվել են աշխատանքի ժամանակավորապես դադարեցված կարգավիճակ ունեցող կազմակերպություններում:

- 946 շահառուներ ընդգրկվել են վճարման ցուցակներում, որոնք ընդունվել են աշխատանքի 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում և ազատվել են 2020 թվականի մարտի 13-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Տվյալ շահառուներին վճարվել է 64,328.0 հազ.դրամ:
- 641 շահառուներ ընդգրկվել են վճարման ցուցակներում, որոնք ընդունվել են աշխատանքի 2020 թվականի հունվար ամսվա ընթացքում և ազատվել են 2020 թվականի մարտի 13-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Տվյալ շահառուներին վճարվել է 43,588.0 հազ.դրամ:

Պետական եկամուտների կոմիտեից Միասնական սոցիալական ծառայությանը տրամադրված տեղեկատվությունում առկա չէ շահառուների նախորդ աշխատանքից ազատման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվությունը, հետևաբար վերը նշված 2504 շահառուների որոշմամբ սահմանված հունվարի 1-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը 3 աշխատանքային օր չգերազանցելու հանգամանքը, ինչպես նաև 2020 թվականի հունվարի մեկից անընդմեջ աշխատելու փաստը տվյալ տեղեկատվության առկայության պարագայում հնարավոր չէ պարզել: Հստակ չէ վճարման ցուցակներում տվյալ շահառուների ընդգրկման հանգամանքը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

3.3-րդ կետի *վերաբերյալ տեղեկացնում եմ, որ նշված անձանց վճարումներն իրականացվել են 03.04.2020թ. թիվ 6.1/18789-2020 գրությամբ Պետական եկամուտների կոմիտեի կողմից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրված ցանկին համապատասխան՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 05.04.2020թ. թիվ ՀԲ/ԱԳ-5/9935-2020 գրությամբ ստացված հանձնարարության հիման վրա:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն: Ծախսային արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ էր հստակ պահպանել միջոցառման շրջանակներում սահմանված սահմանափակումները:

3.4. Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվեց, որ վճարման ցուցակներում ընդգրկվել են ժամանակավոր դադարեցված կարգավիճակ ունեցող կազմակերպություններում աշխատած 1542 շահառու, հաշվառումից հանված՝ 9 շահառու, սնանկ ճանաչված՝ 13 շահառու: Ընդհանուր առմամբ տվյալ շահառուներին վճարվել է 106,352.0 հազ.դրամ:

Հստակ չէ վճարման ցուցակներում տվյալ շահառուների ընդգրկման հանգամանքը, հաշվի առնելով որոշմամբ սահմանված 2020 թվականի հունվարի մեկից անընդմեջ աշխատելու սահմանափակումը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

3.4-րդ կետի *վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 30-ի N 410-Լ որոշմամբ գործատուի կարգավիճակի սահմանում նախատեսվել է միայն անհատ ձեռնարկատերերի համար, մասնավորապես՝ նշված որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աջակցությունից չեն կարող օգտվել այն անձինք, ովքեր 2020 թվականի մարտի 30-ի (ներառյալ) դրությամբ հանդիսացել են անհատ ձեռնարկատեր (բացառությամբ այն անհատ ձեռնարկատերերի, որոնք հաշվառվել են 2020 թվականի հունվարի 1-ից հետո), ում գործունեությունը նույն ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված կարգով դադարեցված չի եղել: Հետևաբար գործատուի՝ ժամանակավոր դադարեցված, հաշվառումից հանված կամ սնանկ ճանաչվելու հանգամանքը չէր կարող ազդել անձի՝ աջակցությունից օգտվելու իրավունքի վրա:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Հաշվեքննող օբյեկտի բացատրության մեջ նշված այն դիտարկումը, որ գործատուի՝ ժամանակավոր դադարեցված, հաշվառումից հանված կամ սնանկ ճանաչվելու հանգամանքը չէր կարող ազդել անձի՝ աջակցությունից օգտվելու իրավունքի վրա պարզ չէ այն իմաստով, որ միջոցառման շրջանակներում որպես սահմանափակում հստակ սահմանվել է 2020թ. հունվարի 1-ից **անընդմեջ** աշխատելը:

4. Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հողի կնոջը միանվագ դրամական օժանդակություն տրամադրելու վերաբերյալ (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում) (1225-12004):

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

4.1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 9350 շահառու՝ 9,299.0 հազ.դրամ: Ըստ ոչ ֆինանսական հաշվետվության շահառուների քանակը կազմել է 9299 շահառու, որոնց հատկացված գումարը կազմել է 933,572.5 հազ. դրամ: Ըստ ներկայացված տեղեկատվության վճարման ցուցակում ընդգրկվել են 9781 շահառուներ, որոնց հատկացված միանվագ դրամական աջակցությունը կազմել է 978,100.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 6-ի ‘‘Կորոնավիրուսի տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հողի կնոջը միանվագ դրամական օժանդակություն տրամադրելու կարգը հաստատելու մասին’’ թիվ 484-Լ որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի համաձայն, եթե միանվագ աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Ստացված տեղեկատվության համաձայն 135 անձերից վերադարձվել է 19,000.0 հազ. դրամ:

Առկա է տարբերություն ոչ ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված ցուցանիշների և ստացված տեղեկատվությամբ վճարված և վերադարձված գումարների միջև՝ 347 շահառու, 25,527.5 հազ.դրամ:

Ստացված տեղեկատվության համաձայն 11 շահառուներ, որ չպետք է ընդգրկված լինեին վճարման ցուցակվերում, ընդգրկվել են և նրանց բանկային հաշվեհամարների փոխանցվել է միանվագ դրամական աջակցությամբ սահմանված գումարը՝ 1,100.0 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

4.1-ին կետով *կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 7-րդ միջոցառման մասով նշված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում եմ, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Գրառումների 1.1-ի և 3.1-ի կետերի վերաբերյալ վերը հայտնած դիրքորոշումը և միաժամանակ տեղեկացնում եմ, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է 978,100,000 ՀՀ դրամ գումար, դրամարկղային ծախսը կազմել է 933,572, 500 ՀՀ դրամ գումար, հետ է վերադարձվել 44,527,500 ՀՀ դրամ գումար:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել, ինչպես նաև այն, որ Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է հետ վերադարձված գումարների մասին միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված

տեղեկատվությունը (ընդհանուր 19,000.00 հազ. դրամ), որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ և «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունների կողմից, ուստի 25,527.5 հազ. դրամ հետ վերադարձված գումարների մասով անվանացանկ առկա չէ: Միաժամանակ նպատակային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի միջոցառման շրջանակներում սահմանվեին գումարների հետ վերադարձի, ինչպես նաև հետ վերադարձվող գումարների հսկողական և հետհսկողական հստակ մեխանիզմներ:

<u>Ծախսային արդյունավետության տեսանկյունից</u>

4.2 ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 6-ի թիվ 484-Լ որոշմամբ հաստատված կարգի 3 կետի համաձայն (մինչև ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 14-ի N 555-Լ որոշմամբ ուժը կորցրած ճանաչելը), անձը չի կարող օգտվել սույն կարգով նախատեսված օժանդակությունից, եթե՝ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 358-Լ (չորրորդ միջոցառում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 30-ի թիվ 410-Լ (վեցերորդ միջոցառում) կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 30-ի թիվ 412-Լ (ութերորդ միջոցառում) որոշումներով նախատեսված միջոցառումների շահառու:

Ստացված տեղեկատվության համադրման արդյունքում պարզվեց, որ 7-րդ միջոցառման շահառու հանդիսացածներից.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 358-Լ (չորրորդ միջոցառում) որոշմամբ հաստատված միջոցառման շահառու են հանդիսացել 47 անձ, 6,200.0 հազ. դրամ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 30-ի թիվ 410-Լ (վեցերորդ միջոցառում) որոշմամբ հաստատված միջոցառման շահառու են հանդիսացել 38 անձ, 3,800.0 հազ. դրամ:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 30-ի թիվ 412 (ութերորդ միջոցառում) որոշմամբ հաստատված միջոցառման շահառու են հանդիսացել 77 անձ, 6,736.3 հազ. դրամ:

Ստացված տեղեկատվության համադրման արդյունքում մեկ անձ ընդգրկվել 7-րդ միջացառման մեջ, որը ներառվել է նաև 4-րդ, 6-րդ և 8-րդ միջացառումների վճարման ցուցակներում: 10 անձ 7-րդ միջոցառումից բացի ներառվել են նաև այլ 2 միջոցառումների վճարման ցուցակներում:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

4.2-րդ կետի *վերաբերյալ տեղեկացնենք, որ Հաշվեքննիչ պալատի կողմից կազմված հաշվեքննության արձանագրության 22-րդ էջում նշված 2020 թվականի ապրիլի 6-ի N 484-Լ որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի իրավակարգավորումը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 14-ի N 555-Լ որոշմամբ, հետևաբար տվյալ կետով իրականացված վճարումները իրավաչափ են:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն: Պարզ չէ տվյալ սահմանափակման ներառելը և ընդամենը 8 օր հետո ուժը կորցրած ճանաչելու նպատակայնությունը:

5. Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19)տարածման հետևանքով մանավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում) (1225-12010):

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

5.1 Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 136,837 շահառու՝ 9,229,339.7 հազ.դրամ: Ըստ ոչ ֆինանսական հաշվետվության շահառուների քանակը կազմել է 134,679 շահառու, որոնց հատկացված գումարը

կազմել է 8,953,170.9 հազ. դրամ: Ըստ ներկայացված տեղեկատվության վճարման ցուցակում ընդգրկվել են 134,678 շահառուներ, որոնց հատկացված միանվագ դրամական աջակցությունը կազմել է 9,083,473.4 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 9-ի ''Կորոնավիրուսի հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին եվ անհատ ձեռնարկատերերին միանվագ աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու մասին'' թիվ 507-Լ որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի համաձայն, եթե միանվագ աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Ստացված տեղեկատվության համաձայն 1,303 անձերից վերադարձվել է 83,094.6 հազ. դրամ:

Առկա է տարբերություն ոչ ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված ցուցանիշների և ստացված տեղեկատվությամբ վճարված գումարների միջև:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

5.1-ին կետով *կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 8-րդ միջոցառման շրջանակներում հետ վերադարձված ֆինանսական միջոցների արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում եմ, որ Ծառայության պետական կենսաթոշակային համակարգի տվյալների ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության կողմից Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը, որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «Կոնվերս Բանկ», «Հայբիզնեսբանկ», «Արդշինբանկ», «Ամերիաբանկ» ՓԲ և «Յունիբանկ», «Ակբա Բանկ» ԲԲ ընկերությունների կողմից, որոնք հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու օրենսդրական պարտավորություն չեն ունեցել:*

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է 9,083,601,204 ՀՀ դրամ գումար, դրամարկղային ծախսը կազմել է 8,953,170,900 ՀՀ դրամ գումար, հետ է վերադարձվել 130,430,304 ՀՀ դրամ գումար:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել, ինչպես նաև այն, որ Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է հետ վերադարձված գումարների մասին միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը (ընդհանուր 83,094.6 հազ. դրամ), որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «Կոնվերս Բանկ», «Հայբիզնեսբանկ», «Արդշինբանկ», «Ամերիաբանկ» ՓԲ և «Յունիբանկ», «Ակբա Բանկ» ԲԲ ընկերությունների կողմից, ուստի 47,335.8 հազ. դրամ հետ վերադարձված գումարների մասով անվանացանկ առկա չէ: Միաժամանակ նպատակային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի միջոցառման շրջանակներում սահմանվեին գումարների հետ վերադարձի, ինչպես նաև հետ վերադարձվող գումարների հսկողական և հետհսկողական հստակ մեխանիզմներ:

5.2 ՀՀ Կառավարության 2020թ. մարտի 30-ի ''Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառումը հաստատելու մասին'' թիվ 412-Լ և ՀՀ Կառավարության 2020թ. հունիսի 18-ի ''Կորոնավիրուսի տնտեսական հետեվանքների չեզոքացման քսաներորդ միջոցառումը եվ դրա շրջանակներում աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին'' թիվ 983-Լ որոշումների 2-րդ կետերով սահմանված տուժած ոլորտները ներկայացված են հավելված 1-ում.

Ինչպես երևում է աղյուսակից 20-րդ միջոցառումով սահմանված 13 ոլոտներից 12-ը ընդգրկված են եղել 8-րդ միջոցառման շրջանակներում, միայն խաղատների գործունեության ոլորտը չի ընդգրկվել 8-րդ միջոցառման շրջանակներում:

Մինչդեռ, Պարետի 2020թ. մարտի 21-ի ''Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ'' թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն արգելվել է խաղատների և բուքմեյքերական և խաղագումարով գրազի կազմակերպման գործունեության սպասարկման գրասենյակների գործունեության տեսակները:

Հետևաբար, պարզ չէ տվյալ ոլորտի որպես տուժած ոլորտ 8-րդ միջոցառման մեջ չընդգրկված լինելու հանգամանքը, և այն միայն 20-րդ միջոցառումով հունիսի 18-ին նոր տուժած ոլորտ սահմանելը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

5.3. ՀՀ Կառավարության 2020թ. մարտի 30-ի ''Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառումը հաստատելու մասին'' թիվ 412-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետը, որով սահմանվել են տուժած ոլորտները, ենթարկվել է մի շարք փոփոխությունների: Տվյալ փոփոխությունները, ինչպես նաև տվյալ ոլորտների նկատմամբ սահմանափակումները ներակայացված են հավելված 2-ում.

Ինչպես երևում է հավելված 2-ից սկսված 6-րդ ոլորտից Պարետի սահմանափակումները կիրառվել են 03.05.2020 թ.-ից, մինչդեռ տվյալ միջոցառման շահառու են հանդիսացել մարտի 13-30 տվյալ ոլորտների վարձու աշխատողները կամ անհատ ձեռնարկատերերը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

6. Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում) (1225-12011)

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

6.1 Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 199,599 շահառու՝ 5,289,426.5 հազ.դրամ: Ըստ ոչ ֆինանսական հաշվետվության շահառուների քանակը կազմել է 195,419 շահառու, որոնց հատկացված գումարը կազմել է 4,748,903.9 հազ. դրամ: Ըստ ներկայացված տեղեկատվության վճարման ցուցակում ընդգրկվել են 194,919 շահառուներ, որոնց հատկացված միանվագ դրամական աջակցությունը կազմել է 5,165,353.5 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 10-ի ''Կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած՝ մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին միանվագ աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի թիվ 427-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին'' թիվ 536-Լ որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, եթե միանվագ աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Ստացված տեղեկատվության համաձայն 3,833 անձերից վերադարձվել է 118,441.2 հազ. դրամ:

Առկա է տարբերություն ոչ ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալներում՝ փաստացի աջակցություն ստացողների թվաքանակը նշվել է

195,419 շահառու, որոնց համար վճարման ենթակա գումարը կկազմեր 5,178,603.5 հազ. դրամ, սակայն միջոցառման վրա կատարված փաստացի ծախսի գումարը նշվել է 4,748,903.9 հազ. դրամ, որը համարժեք է 179,204 շահառուի համար վճարման ենթակա գումարին:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

6.1-ին կետով *կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 9-րդ միջոցառման մասով կետով նշված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում եմ, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Գրառումների 5.1-ին կետի վերաբերյալ վերը հայտնած դիրքորոշումը և միաժամանակ տեղեկացնում եմ, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառման շրջանակներում ֆինանսավորվել է 5,178,603,500 ՀՀ դրամ գումար, դրամարկղային ծախսը կազմել է 4,748,903,990 ՀՀ դրամ գումար, հետ է վերադարձվել 429,699,510 ՀՀ դրամ գումար:*

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել, ինչպես նաև այն, որ Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է հետ վերադարձված գումարների մասին միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը (ընդհանուր 118,441.2 հազ. դրամ), որը տվյալ միջոցառման շրջանակներում ներկայացվել է միայն «Կոնվերս Բանկ», «Հայբիզնեսբանկ», «Արդշինբանկ», «Ամերիաբանկ» ՓԲ և «Յունիբանկ», «Ակբա Բանկ» ԲԲ ընկերությունների կողմից, ուստի 311,258.3 հազ. դրամ հետ վերադարձված

գումարների մասով անվանացանկ առկա չէ: Միաժամանակ նպատակային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի միջոցառման շրջանակներում սահմանվեին գումարների հետ վերադարձի, ինչպես նաև հետ վերադարձվող գումարների հսկողական և հետհսկողական հստակ մեխանիզմներ:

<u>Ծախսային արդյունավետության տեսանկյունից</u>

6.2 9-րդ միջոցառման շրջանակներում կազմված շահառուների ցանկերը վերանայվել են և պակասեցվել են 6021 շահառու, ստորև ներկայացված աղյուսակ 2-ում նշված պատճառներով:

Աղյուսակ 2

9-րդ միջոցառումից հանված շահառուների վերաբերյալ

h/h	Միջոցառումից հանելու պատճառը	Շահառուների քանակը
1	Դիմող ծնողը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ չի գտնվել ՀՀ-ում	239
2	Դիմող ծնողը մատի 12-ից մարտի 30 ժամանակահատվածում որևէ օր հանդիսացել է վարձու աշխատող	2864
3	Դիմող ծնողը մատի 31 -ի դրությամբ հանդիսացել է անհատ ձեռնարկատեր	178

4	Դիմող ծնողի 2020 թ-ի հունվար 1-ից մինչև մարտի 1 ընկած ժամանակահատվածում միջին աշխատավարձը գերազանցել է 500000 դրամը	16
5	Դիմողը հաշվառված է ընտանեական և սոցիալական նպաստի 2020 թ-ի մարտ ամսվա վճարման ցուցակներում	16
6	Երեխայի մյուս ծնողը մատի 31 -ի դրությամբ հանդիսացել է անհատ ձեռնարկատեր	306
7	Երեխայի մյուս ծնողը մատի 12-ից մարտի 30 ժամանակահատվածում որևէ օր հանդիսացել է վարձու աշխատող	1713
8	Երեխայի մյուս ծնողի 2020 թ-ի հունվար 1-ից մինչև մարտի 1 ընկած ժամանակահատվածում միջին աշխատավարձը գերազանցել է 500000 դրամը	18
9	Երեխան 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ չի գտնվել ՀՀ-ում	355
10	Երեխան ունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ	2
11	Ծնված 01.01.2002-02.04.2002 ժամանակահատվածում	314
ԸՆԴԱՄԵՆԸ		6021

<u>9-րդ միջոցառման շահառու են հանդիսանում</u> բոլոր այն ընտանիքները, որոնք ունեն 2002 թվականի ապրիլի 2-ից մինչև 2020 թվականի ապրիլի 2-ը (ներառյալ) ծնված երեխա և երեխայի Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող *<u>ծնողներից ոչ մեկը կամ միայնակ ծնողը կամ խնամակալը չի ունեցել գրանցված աշխատանք 2020թ. մարտի 12-ի դրությամբ և չի ընդունվել ժամանակավոր կամ մշտական գրանցված աշխատանքի 2020թ. մարտի 12-ից մինչև 2020թ. մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում:</u>*

4-րդ միջոցառման շահառու են հանդիսացել բոլոր այն ընտանիքները, որոնք ունեն մինչև 14 տարեկան երեխա և առկա է եղել հետևյալ հանգամանքներից որևէ մեկը՝

1) երկու ծնողներն *ազատվել են աշխատանքից 2020 թվականի մարտի 13-ից մինչև 2020 թվականի մարտի 25-ը ընկած ժամանակահատվածում*,

2) ծնողներից մեկն *ազատվել է աշխատանքից 2020 թվականի մարտի 13-ից մինչև 2020 թվականի մարտի 25-ը ընկած ժամանակահատվածում, իսկ մյուսն աշխատանք չի ունեցել:*

9-րդ միջոցառման շահառուներից ընդգրկված են եղել 4-րդ միջոցառման շահառուների ցուցակներում, որպես դիմող հայր 342 և դիմող մայր 925 անձիք:

6-րդ միջոցառման շահառու են հանդիսացել այն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, ովքեր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվել մասնավոր հատվածի գործատուի հետ (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների և ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպությունների, ներդրումային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչների և այլ նմանատիպ գործունեություն ծավալողների) անընդմեջ առնվազն 2020 թվականի հունվարի 1-ից միչև մարտի 13-ը ժամանակահատվածում (կամ հունվարի 1-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը չի գերազանցել 3 աշխատանքային օրը), *սակայն ազատվել է աշխատանքից 2020 թվականի մարտի 13-ից մինչև մարտի 30-ը ընկած ժամանակահատվածում*: Աջակցությունը տրամադրվում է միանվագ նվազագույն ամսեկան աշխատավարձի չափով:

9-րդ միջոցառման շահառուներից ընդգրկված են եղել 6-րդ միջոցառման շահառուների ցուցակներում, որպես դիմող 699 անձիք:

8-րդ միջոցառման շահառու են հանդիսացել այն անձինք, ովքեր *մարտի 13-30 հանդիսացել են նշված ոլորտների վարձու աշխատողներ կամ անհատ ձեռնարկատերեր:*

9-րդ միջոցառման շահառուներից ընդգրկված են եղել 8-րդ միջոցառման շահառուների ցուցակներում, որպես դիմող 894 անձիք:

ՀՀ կառավարության 02.04.2020թ.-ի թիվ 427-Լ որոշմամբ հաստատված հավելվածի կետ 8-ի համաձայն՝ անկախ սույն Կառավարության որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետով սահմանված նույնականացման կանոններից, սույն միջոցառման շահառու են հանդիսանում նաև բոլոր այն ծնողները կամ ընտանիքները, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 358-Լ և մարտի 30-ի NN 410-Լ, 411-Լ, 412-Լ որոշումներով հաստատված միջոցառումներից մեկի շահառու, *սակայն սույն միջոցառմամբ սահմանված կարգով՝ յուրաքանչյուր երեխայի համար 26500 դրամ գումարի չափով աջակցություն ստանալու հաշվարկի դեպքում ստացվում է ավելի մեծ գումար*: Այս դեպքում, շահառուն իրավունք ունի հրաժարվելու նշված որոշումներով հաստատված միջոցառման աջակցությունից և դիմելու սույն միջոցառմամբ սահմանված չափով աջակցության համար:

Այս կետը որոշումը ընդունելուց 12 օր հետո ուժը կորցրել է ՀՀ կառավարության 14.04.2020թ.-ի թիվ 555-Լ որոշմամբ:

Պարզ չէ տվյալ սահմանափակման ներառելը և ընդամենը 12 օր հետո ուժը կորցրած ճանաչելու նպատակայնությունը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

7. Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50-%-ի

չափով աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 11 միջոցառում) (1225-12007)

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնմեկերորդ միջոցառումը հաստատվել է ՀՀ Կառավարության 13.04.2020թ. ընդունված թիվ 542-Լ որոշմամբ: Նշված որոշման համաձայն 11-րդ միջոցառման շահառու են հանդիսացել բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքած այն բնակիչ բաժանորդները, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել՝ բնական գազի սպառման գծով՝ 10 000 դրամը ներառյալ, իսկ էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5 000 դրամը ներառյալ: Աջակցությունը տրամադրվել է յուրաքանչյուր բաժանորդի կողմից 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված համապատասխանաբար բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50%-ի չափով, ընդ որում, պարտքի առկայության դեպքում այդ գումարն ուղղվել է բնակիչ բաժանորդի ունեցած պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ ձևակերպվել որպես կանխավճար:

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

7.1 Ստացված տեղեկատվության ուսումնասիությունից պարզվեց, որ նշված միջոցառման շրջանակներում էլեկտրական էներգիայի սպառման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 235,132 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի ծախսի 50%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 311,315.68 հազ. դրամ:

Վերը նշված բաժանորդներից մինչև 1 կվտ. կամ 44.98 դրամ ներառյալ սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 9,200 բաժանորդ, իսկ նրանց փոխհատուցված գումարի չափը՝ 109.5 հազ.դրամ, 1 կվտ.-ից ավել մինչև 1,000 դրամի չափով սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 37,881 բաժանորդ, իսկ նրանց փոխհատուցված գումարի չափը՝ 9,170.5 հազ.դրամ:

Բնական գազի սպառման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 215,695 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած բնական գազի ծախսի 50%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 474,903.62 հազ. դրամ:

Վերը նշված բաժանորդներից մինչև 1 խ/մ կամ 139 դրամ ներառյալ սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 4,117 բաժանորդ, իսկ նրանց փոխհատուցված գումարի չափը՝ 275.4 հազ.դրամ, 1 խ/մ-ից ավել մինչև ներառյալ 2,000 դրամի չափով սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 50,836 բաժանորդ, իսկ նրանց փոխհատուցված գումարի չափը՝ 28,224.3 հազ.դրամ:

Վերը նշված էլեկտրական էներգիայի թվով 9200 և բնական գազի թվով 4117 բաժանորդների մասով՝ որոնց սպառումը փետրվար ամսին կազմել է համապատասխանաբար՝ մինչև 1 կվտ. և 1 խ/մ, պարզ չէ նրանց որպես շահառու ճանաչելու նպատակայնությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման նվազագույն քանակի սպառում հնարավոր չէ իրականացնել տվյալ հասցեներում ամբողջ ամիս բնակվելու դեպքում:

Աջակցություն տրամադրելու նվազագույն շեմ սահմանելու դեպքում նպատակային արդյունավետությունը առավել կբարձրանար և հնարավորություն կտար տարբեր պատճառներով՝ օրինակ՝ երկրորդ և ավել բնակարանի, ամառանոցի, երկրից բացակայելու և այլ դեպքերում, մարդկանց շահառուների ցուցակում ընգրկելու ռիսկը նազեցնելու համար:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

<u>Ծախսային արդյունավետության տեսանկյունից</u>

7.2 Ուսումնասիրությունից պարզվեց, որ բնական գազի սպառման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված են թվով 40 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել

է 85.6 հազ.դրամ, ինչպես նաև "NULL" գրառմամբ թվով 325 բաժանորդ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 684.9 հազ.դրամ:

Տվյալ 40 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձինք, հաշվի առնելով միայն բնակիչ բաժանորդներին փոխհատուցում իրականացնելու հանգամանքը, ցուցակներում չպետք է ընդգրկվեին, իսկ "NULL" գրառմամբ թվով 325 բաժանորդների պարագայում հստակ չէ նրանց բնակիչ բաժանորդ լինելու հանգամանքը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

8. *Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 12 միջոցառում) (1225-12008)*

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներկուերորդ միջոցառումը հաստատվել է ՀՀ Կառավարության 14.04.2020թ. ընդունված թիվ 550-Լ որոշմամբ: Նշված որոշման համաձայն 12-րդ միջոցառման շահառու են հանդիսացել բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքած այն բնակիչ բաժանորդները, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել՝ բնական գազի սպառման գծով՝ 10 001 – 30 000 դրամ ներառյալ, իսկ էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5 001 – 10 000 դրամ ներառյալ: Աջակցությունը տրամադրվել է յուրաքանչյուր բաժանորդի կողմից 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված համապատասխանաբար բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 30%-ի չափով, ընդ որում, պարտքի առկայության դեպքում այդ գումարն ուղղվել է

բնակիչ բաժանորդի ունեցած պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ ձևակերպվել որպես կանխավճար:

Ստացված տեղեկատվության ուսումնասիությունից պարզվեց, որ նշված միջոցառման շրջանակներում էլեկտրական էներգիայի սպառման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 280,298 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի ծախսի 30%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 618,959.50 հազ. դրամ:

Բնական գազի սպառման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 206,136 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած բնական գազի ծախսի 30%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 1,223,969.17 հազ. դրամ:

Ծախսային արդյունավետության տեսանկյունից

8.1 Ուսումնասիրությունից պարզվեց, որ բնական գազի սպառման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված են թվով 161 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 1,046.7 հազ.դրամ, ինչպես նաև "NULL" գրառմամբ թվով 487 բաժանորդ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 2,903.6 հազ.դրամ:

Տվյալ 161 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձինք, հաշվի առնելով միայն բնակիչ բաժանորդներին փոխհատուցում իրականացնելու հանգամանքը, ցուցակներում չպետք է ընդգրկվեին, իսկ "NULL" գրառմամբ թվով 487 բաժանորդների պարագայում հստակ չէ նրանց բնակիչ բաժանորդ լինելու հանգամանքը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

9. Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում) (1225-12012)

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառումը հաստատվել է ՀՀ Կառավարության 16.04.2020թ. ընդունված թիվ 557-Լ որոշմամբ: Նշված որոշման համաձայն 13-րդ միջոցառման շահառու են հանդիսացել 2020 թվականի ապրիլ ամսվա դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստների իրավունք ունեցող ընտանիքները: Աջակցությունը տրամադրվել է յուրաքանչյուր ընտանիքի՝ իր նպաստի չափի 50%-ի չափով, որի՝ 70%-ը ընտանիքին տրամադրվել է կանխիկ վճարման ձևով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին, իսկ 30%-ը փոխանցվել է որպես բաժանորդի կողմից սպառվող էլեկտրական էներգիայի դիմաց վճար, ընդ որում, պարտքի առկայության դեպքում այդ գումարն ուղղվել է բնակիչ բաժանորդի ունեցած պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ ձևակերպվել որպես կանխավճար, իսկ շահառուի բաժանորդ չհանդիսանալու դեպքում գումարը տրամադրվել է շահառուին կանխիկ վճարման ձևով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին: Որոշման համաձայն նշված միջոցառման իրականացումը առաջարկվել է մինչև 30.04.2020թ. կազմակերպել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին:

Ստացված տեղեկատվության ուսումնասիությունից պարզվեց, որ նշված միջոցառման շրջանակներում էլեկտրական էներգիայի սպառման գծով նախատեսվել է փոխհատուցել ընդհանուր թվով 83,727 բնակիչ բաժանորդների սպառած էլեկտրական էներգիայի ծախսը, ընդհանուր գումարային արտահայտությամբ 356,190.50 հազ. դրամի չափով:

Կանխիկ վճարման ձևով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին, նախատեսվել է փոխհատուցում տրամադրել թվով 85,906 ընտանիքների, ընդհանուր գումարային արտահայտությամբ 858,072.30 հազ. դրամի չափով:

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

9.1 Ուսումնասիրությունից պարզվեց, որ էլեկտրական էներգիայի սպառման գծով փաստացի փոխհատուցում ստացել է ընդհանուր թվով 83,645 բնակիչ բաժանորդների սպառած էլեկտրական էներգիայի ծախսը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 355,816.90 հազ. դրամ: Թվով 82 բաժանորդների համար ձևակերպումներ չեն կատարվել, քանի որ 62 քարտերի համարները կրկնվել են՝ ընդհանուր գումարային արտահայտությամբ 288.50 հազ. դրամ, իսկ 20 քարտերի համարները բաժանորդական բազայում չեն գտնվել՝ ընդհանուր գումարային արտահայտությամբ 85.10 հազ. դրամ:

Պարզ չէ, թե վերը նշված էլեկտրական էներգիայի ծախսի դիմաց փաստացի փոխհատուցում չստացած թվով 82 բաժանորդներն արդյոք ՀՀ Կառավարության 16.04.2020թ. ընդունված թիվ 557-Լ որոշման հիման վրա դիտարկվել են որպես բաժանորդ չհանդիսացող և նրանց համար հաշվարկված գումարները տրամադրվել են շահառուներին կանխիկ վճարման ձևով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

9.2 Կանխիկ վճարման ձևով՝ ապրիլ ամսվա նպաստի վճարման հետ միասին փաստացի փոխհատուցում ստացել է ընդհանուր թվով 85,217 ընտանիք, որը գումարային արտահայտությամբ կազմել է 851,983.50 հազ. դրամ: Թվով 689 ընտանիքի փոխհատուցում չի տրամադրվել՝ ընդհանուր գումարային արտահայտությամբ 6,088.80 հազ. դրամ:

Ստացված տեղեկատվությունից պարզ չէ տվյալ 689 ընտանիքներին աջակցություն չտրամադրելու հանգամանքները:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

10. *Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 16 միջոցառում) (1225-12009)*

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնվեցերորդ միջոցառումը հաստատվել է ՀՀ Կառավարության 04.05.2020թ. ընդունված թիվ 658-Լ որոշմամբ: Նշված որոշման համաձայն 16-րդ միջոցառման շահառու են հանդիսացել բնական գազի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման և խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման պայմանագիր կնքած այն բնակիչ բաժանորդները, որոնց բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել՝ բնական գազի սպառման գծով՝ 30 001 – 40 000 դրամ ներառյալ, էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ գազաֆիկացված բնակավայրերում՝ 10 001 – 25 000 դրամ ներառյալ, իսկ չգազաֆիկացված բնակավայրերում՝ մինչև 25 000 դրամը ներառյալ, իսկ խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման 2020 թվականի մարտ ամսվա ծախսը չի գերազանցել՝ 3 000 դրամը ներառյալ: Աջակցությունը տրամադրվել է յուրաքանչյուր բաժանորդի կողմից 2020 թվականի փետրվար ամսվա ընթացքում սպառված համապատասխանաբար բնական գազի և գազաֆիկացված բնակավայրերում էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 30%-ի չափով, իսկ չգազաֆիկացված բնակավայրերում՝ էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50%-ի չափով, իսկ խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման դիմաց վճարի 50%-ի չափով, ընդ որում, պարտքի առկայության դեպքում այդ գումարն ուղղվել է բնակիչ բաժանորդի ունեցած պարտքի մարմանը, իսկ դրա բացակայության դեպքում՝ ձևակերպվել որպես կանխավճար:

Ստացված տեղեկատվության ուսումնասիությունից պարզվեց, որ նշված միջոցառման շրջանակներում գազաֆիկացված բնակավայրերում էլեկտրական էներգիայի սպառման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 207,853 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի ծախսի 30%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 916,460.61 հազ. դրամ:

Չգազաֆիկացված բնակավայրերում էլեկտրական էներգիայի սպառման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 23,006 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի ծախսի 50%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 80,831.11 հազ. դրամ:

Բնական գազի սպառման գծով փաստացի փոխհատուցվել է ընդհանուր թվով 81,697 բաժանորդների փետրվար ամսվա ընթացքում սպառած բնական գազի ծախսի 30%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 848,454.40 հազ. դրամ:

Խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման գծով փոխհատուցվել է ընդհանուր թվով 424,974 բաժանորդների մարտ ամսվա ընթացքում սպառած խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման ծախսի 50%-ը, որը գումարային արտահայտությամբ կազմել է 299,889.35 հազ. դրամ:

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

10.1 Ուսումնասիրությունից պարզվեց, որ մինչև 1 խ/մ կամ 180 դրամ ներառյալ խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման գծով սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 24,058 բաժանորդ, իսկ նրանց փոխհատուցված գումարի չափը՝ 2,018.4 հազ.դրամ, 1 խ/մ-ից ավել մինչև ներառյալ 720 դրամի չափով սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 86,246 բաժանորդ, իսկ նրանց փոխհատուցված գումարի չափը՝ 28,857.8 հազ.դրամ:

Վերը նշված թվով 24,058 բաժանորդների մասով՝ որոնց սպառումը մարտ ամսին կազմել է մինչև 1 խ/մ, պարզ չէ նրանց որպես շահառու ճանաչելու նպատակայնությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման նվազագույն

քանակի սպառում հնարավոր չէ իրականացնել տվյալ հասցեներում ամբողջ ամիս բնակվելու դեպքում:

Աջակցություն տրամադրելու նվազագույն շեմ սահմանելու դեպքում նպատակային արդյունավետությունը առավել կբարձրանար և հնարավորություն կտար տարբեր պատճառներով՝ օրինակ՝ երկրորդ և ավել բնակարանի, ամառանոցի, երկրից բացակայելու և այլ դեպքերում, մարդկանց շահառուների ցուցակում ընգրկելու ռիսկը նազեցնելու համար:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

<u>Ծախսային արդյունավետության տեսանկյունից</u>

10.2 Խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված են թվով 3 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 1.0 հազ.դրամ:

Գազաֆիկացված բնակավայրերում էլեկտրական էներգիայի սպառման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված է թվով 1 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձ, որի փոխհատուցված գումարը կազմել է 3.5 հազ.դրամ:

Բնական գազի սպառման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված են թվով 81 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 833.9 հազ.դրամ, ինչպես նաև "NULL" գրառմամբ թվով 231 բաժանորդ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 2,403.9 հազ.դրամ:

Նշենք նաև, որ թվով 2 բաժանորդներ հրաժարվել են ընդհանուր 20.9 հազ.դրամ փոխատհուցման գումարից, որոնք վերոնշյալ ընդհանուր փոխհատուցված բաժանորդների ցուցանիշներում ներառված չեն:

Տվյալ 81 բնակիչ բաժանորդ չհանդիսացող անձինք, հաշվի առնելով միայն բնակիչ բաժանորդներին փոխհատուցում իրականացնելու հանգամանքը, ցուցակներում չպետք է ընդգրկվեին, իսկ "NULL" գրառմամբ թվով 231 բաժանորդների պարագայում հստակ չէ նրանց բնակիչ բաժանորդ լինելու հանգամանքը:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

11. Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում) (1225-12013):

<u>Նպատակային արդյունավետության տեսանկյունից</u>

11.1 ՀՀ Կառավարության 2020թ. հունիսի 18-ի ''Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառումը եվ դրա շրջանակներում աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին'' թիվ 983-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետը, որով սահմանվել են տուժած ոլորտները, ենթարկվել է մի շարք փոփոխությունների: Տվյալ փոփոխությունները, ինչպես նաև տվյալ ոլորտների նկատմամբ սահմանափակումները ներակայացված են աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3

Հ/Հ	20-րդ միջոցառում	Տուժած ոլորտ սահմանելու ամսաթիվ փոփոխության որոշման համար	Պարետի կողմից կիրառված սահմանափակման որոշում, ամսաթիվ

1.	հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
2.	հանրային սննդի ծառայություններ.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
3.	զբոսաշրջային ծառայություններ.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
4.	նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ).	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
5.	սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ).	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
6.	զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
7.	կինոթատրոնների գործունեություն.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
8.	լուսանկարչության բնագավառում գործունեություն.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
9.	ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթ.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
10.	կրթական գործունեություն մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
11.	ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
12.	խաղատների գործունեություն.	18.06.2020թ. թիվ 983-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
13.	առողջության վերականգնման	29.06.2020թ. թիվ	03.05.2020թ. թիվ 63

	կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ:	1090-Լ որոշում	որոշում

Ինչպես երևում է աղյուսակից Պարեպի սահմանափակումները կիրառվել են 03.05.2020 թ.-ից, մինչդեռ տվյալ միջոցառման շահառու են հանդիսացել մարտի 1-ից հունիսի 15-ը տվյալ ոլորտների վարձու աշխատողները կամ անհատ ձեռնարկատերերը:

Ինչպես նաև, 8-րդ միջոցառման շահառուների շրջանակներում ընդգրկվել են վարձու աշխատողները այն պարագայում, եթե 2020 թվականի մարտի 13-ից մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում հանդիսացել են Տուժած ոլորտների վարձու աշխատողներ (2020 թվականի մարտի 13-ին կամ դրանից առաջ աշխատանքի են ընդունվել Տուժած ոլորտի գործատուի մոտ և մինչև 2020 թվականի մարտի 30-ը ներառյալ անընդմեջ աշխատել են նույն գործատուի մոտ), իսկ 20-րդ միջոցառումով շահառու են հանդիսացել վարձու աշխատողները (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողները) այն դեպքում, եթե 2020 թվականի մարտի 1-ից մինչև հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածում առնվազն 1 օր աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ են գտնվել տուժած ոլորտի գործատուի հետ (այդ թվում, եթե 2020 թվականի հունիսի 15-ի դրությամբ գործատուն լուծարվել է կամ դադարեցրել է գործունեությունը):

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

12. Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խմշնդիրների առջև կանգնած ՀՀ քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում) (1225-12014):

Նպատակային արդյունավետության տեսանկյունից

12.1 Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 5647 շահառու՝ 384,000.0 հազ.դրամ: Ըստ ներկայացված տեղեկատվության փաստացի շահառուների քանակը կազմել է 5040, որոնց փաստացի վճարված միանվագ դրամական աջակցությունը կազմել է 342,720.5 հազ. դրամ:

Առկա է տարբերություն տարեկան ճշտված պլանի և փաստի միանվագ աջակցություն տրամադրված շահատուների քանակի և հատկացված գումարի միջև՝ 607 շահառու 41,279.5 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

IV. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Նպատակային արդյունավետության տեսակետից պարզ չէ արտակարգ դրություն հայտարարելուց (մարտի 16-ի ժամը 18:30-ից սկսած), ինչպես նաև առաջին սահմանափակումները կիրառելուց առաջ (2020թ. մարտի 17) ընկած ժամանակահատվածը մարտի 13-ից, իսկ 20-րդ միջոցառման համար մարտի 1-ից սկսած՝ շահառուների կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներում ընդգրկելը:

2. Առկա են տարբերություններ ոչ ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված ցուցանիշների և ստացված տեղեկատվությամբ վճարված և վերադարձված գումարների միջև, որոնք ըստ միջոցառումների ներկայացված են ստորև բարված աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4
հազար դրամ

h/h	Միջոցառում	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Ետ վերադարձ՝ ըստ պարզաբանման	Ետ վերադարձ՝ ըստ ներկայացված տեղեկատվության	Տարբերություն
1	4-րդ միջոցառում	212,100.0	182,000.0	30,100.0	17,000.0	13.100.0
2	6-րդ միջոցառում	551,616.0	505,036.0	46,580.0	13,260.0	33,320.0
3	7-րդ միջոցառում	978,100.0	933,572.5	44,527.5	19,000.0	25,527.5
4	8-րդ միջոցառում	9,083,601.2	8,953,170.9	130,430.3	83,094.6	47,335.7
5	9-րդ միջոցառում	5,178,603.5	4,748,904.0	429,699.5	118,441.2	311,258.3
Ընդամենը		16,004,020.7	15,322,683.4	681,337.3	250,795.8	430,541.5

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումները կարգավորող իրավական ակտերում հետ վերադարձված գումարների անձնավորված տեղեկատվությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելու պարտավորություն բանկերը չեն ունեցել, ինչպես նաև այն, որ Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է հետ վերադարձված գումարների մասին միայն Սի-Բի-Էյ-Նեթ (CBA-net) համակարգի միջոցով բանկերից ստացված տեղեկատվությունը (ընդհանուր 250,795.8 հազ. դրամ), ուստի 430,541.5 հազ. դրամ հետ վերադարձված գումարների մասով անվանացանկ առկա չէ:

Միաժամանակ նպատակային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի միջոցառման շրջանակներում սահմանվեին գումարների հետ վերադարձի, ինչպես նաև հետ վերադարձվող գումարների հսկողական և հետհսկողական հստակ մեխանիզմներ:

3. ՀՀ կառավարության որոշումներով հաստատված 4-րդ, 7-րդ և 9-րդ միջոցառումներում նախապես սահմանվել են որոշակի սահմանափակումներ, որոնք ընդամենը օրեր անց ուժը կորցրած են ճանաչվել:

Պարզ չէ տվյալ սահմանափակումները ներառելու և ընդամենը մի քանի օր հետո ուժը կորցրած ճանաչելու նպատակայնությունը:

4. Պետական եկամուտների կոմիտեից Միասնական սոցիալական ծառայությանը տրամադրված տեղեկատվությունում առկա չէ շահառուների նախորդ աշխատանքից ազատման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվությունը, հետևաբար վերը նշված 2504 շահառուների որոշմամբ սահմանված հունվարի 1-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը 3 աշխատանքային օր չգերազանցելու հանգամանքը, ինչպես նաև 2020 թվականի հունվարի մեկից անընդմեջ աշխատելու փաստը տվյալ տեղեկատվության առկայության պարագայում հնարավոր չէ պարզել: Հստակ չէ վճարման ցուցակներում տվյալ շահառուների ընդգրկման հանգամանքը:

5. Հաշվեքննող օբյեկտի բացատրության մեջ նշված այն դիտարկումը, որ գործատուի՝ ժամանակավոր դադարեցված, հաշվառումից հանված կամ սնանկ ճանաչվելու հանգամանքը չէր կարող ազդել անձի՝ աջակցությունից օգտվելու իրավունքի վրա պարզ չէ այն իմաստով, որ միջոցառման շրջանակներում որպես սահմանափակում հստակ սահմանվել է 2020թ. հունվարի 1-ից **անընդմեջ** աշխատելը:

Հստակ չէ վճարման ցուցակներում տվյալ շահառուների ընդգրկման հանգամանքը, հաշվի առնելով որոշմամբ սահմանված 2020 թվականի հունվարի մեկից անընդմեջ աշխատելու սահմանափակումը:

Ընդհանուր առմամբ տվյալ շահառուներին վճարվել է 106,352.0 հազ.դրամ:

6. Վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչների և այլ նմանատիպ գործունեություն ծավալող ոլորտների սահմանափակումները կիրառվել են 2020թ. մարտի 21-ից, սակայն տվյալ ոլորտների աշխատակիցները չեն հանդիսացել 6-րդ միջոցառման շահառու, այն դեպքում, երբ տվյալ միջոցառման համար ժամանակահատվածը սահմանվել է մարտի 13-30-ը ընկած ժամանակահատվածը, որը իր մեջ ներառում է մարտի 21-30-ը ընկած ժամանակահատվածը:

8-րդ միջոցառման մասով, համաձայն հավելված 2-ի՝ սկսած 6-րդ ոլորտից Պարետի սահմանափակումները կիրառվել են 03.05.2020 թ.-ից, մինչդեռ տվյալ միջոցառման շահառու են հանդիսացել մարտի 13-30 տվյալ ոլորտների վարձու աշխատողները կամ անհատ ձեռնարկատերերը:

20-րդ միջոցառման մասով, համաձայն աղյուսակ 3-ի, Պարետի սահմանափակումները կիրառվել են 03.05.2020 թ.-ից, մինչդեռ տվյալ միջոցառման շահառու են հանդիսացել մարտի 1-ից հունիսի 15-ը տվյալ ոլորտների վարձու աշխատողները կամ անհատ ձեռնարկատերերը:

Ինչպես երևում է 8-րդ և 20-րդ միջոցառումների դեպքում՝ չնայած այն հանգամանքին, որ սահմանափակումները սկսել են գործել ավելի ուշ ժամանակահատվածում, տվյալ ոլորտների աշխատակիցները հանդիսացել են նշված միջոցառման շահառուներ, իսկ 6-րդ միջոցառման դեպքում՝ հակառակը՝ չնայած այն հանգամանքին, որ տվյալ ոլորտի նկատմամբ կիրառվել է

սահմանափակում համապատասխան ժամանակահատվածում, սակայն այդ ոլորտի աշխատակիցները չեն հանդիսացել միջոցառման շահառուներ:

7. Էլեկտրական Էներգիայի մասով փոխհատուցում ստացած բաժանորդներից մինչև 1 կվտ. կամ 44.98 դրամ ներառյալ սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 9,200 բաժանորդ, իսկ բնական գազի մասով՝ մինչև 1 խ/մ կամ 139 դրամ ներառյալ սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 4,117 բաժանորդ, խմելու ջրի մասով՝ մինչև 1 խ/մ կամ 180 դրամ ներառյալ խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման գծով սպառում ունեցող փոխհատուցում ստացած բաժանորդների թիվը կազմել է 24,058 բաժանորդ:

Վերը նշված էլեկտրական էներգիայի թվով 9200, բնական գազի թվով 4117 և խմելու ջրի 24,058 բաժանորդների մասով՝ որոնց սպառումը փետրվար ամսին կազմել է համապատասխանաբար՝ մինչև 1 կվտ. և 1 խ/մ, պարզ չէ նրանց որպես շահառու ճանաչելու նպատակայնությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման նվազագույն քանակի սպառում հնարավոր չէ իրականացնել տվյալ հասցեներում ամբողջ ամիս բնակվելու դեպքում:

Աջակցություն տրամադրելու նվազագույն շեմ սահմանելու դեպքում նպատակային արդյունավետությունը առավել կբարձրանար և հնարավորություն կտար տարբեր պատճառներով՝ օրինակ՝ երկրորդ և ավել բնակարանի, ամառանոցի, երկրից բացակայելու և այլ դեպքերում, մարդկանց շահառուների ցուցակում ընգրկելու ռիսկը նազեցնելու համար:

8. 11-րդ, 12-րդ և 16-րդ միջոցառումների շրջանակներում բնական գազի սպառման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված են համապատասխանաբար՝ թվով 40, 161 և 81 բնակիչ բաժանորդ չհանդիսացող բաժանորդներ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 1,966.2 հազ.դրամ, ինչպես նաև "NULL" գրառմամբ համապատասխանաբար՝ թվով 325, 487 և 231 բաժանորդ, որոնց փոխհատուցված ընդհանուր գումարը կազմել է 5,992.4 հազ.դրամ: Տվյալ բնակիչ բաժանորդ չհանդիսացող բաժանորդները, հաշվի առնելով միայն բնակիչ բաժանորդներին փոխհատուցում իրականացնելու հանգամանքը, ցուցակներում չպետք է ընդգրկվեին, իսկ "NULL" գրառմամբ

բաժանորդների պարագայում՝ հստակ չէ նրանց բնակիչ բաժանորդ լինելու հանգամանքը:

V. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակային ծախսային արդյունավետության սկզբունքի պահպանումը ավելի բարձրացնելու նպատակով, առաջարկվում է.

1. Բանկերի հետ համատեղ աղյուսակ 4-ում նշված տարբերությունների մասով (ընդհանուր՝ 430,541.5 հազար դրամ) իրականացնել հետ վերադաձված գումարների ճշգրտումներ (ներառյալ՝ ըստ անվանացանկերի):
2. Պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ ճշգրտել 6-րդ միջոցառման մեջ ընդգրկված 2504 շահառուների մասով որոշմամբ սահմանված հունվարի 1-ից մինչև մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը 3 աշխատանքային օր չգերազանցելու հանգամանքը, ինչպես նաև 2020 թվականի 6-րդ միջոցառման բոլոր շահառուներին հունվարի մեկից անընդմեջ աշխատելու փաստը (ընդհանուր առմամբ տվյալ շահառուներին վճարվել է 106,352.0 հազ.դրամ):
3. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ ճշգրտել 11-րդ, 12-րդ և 16-րդ միջոցառումների շրջանակներում բնական գազի սպառման գծով փոխհատուցում ստացած բաժանորդների ցանկում ներառված ընդահանուր թվով 282 բնակիչ բաժանորդ չհանդիսացող բաժանորդներին և ընդհանուր թվով 1,043 "NULL" գրառմամբ բաժանորդներին փոխհատուցված համապատասխան գումարները՝ 1,966.2 հազ.դրամ և 5,992.4 հազ.դրամ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Ա. Բախչագուլյան

Հավելված 1

Հ/Հ	8-րդ միջոցառում	20-րդ միջոցառում
1	հյուրանոցային և հյուրատնային	հյուրանոցային և հյուրատնային

	ծառայություններ.	ծառայություններ.
2	հանրային սննդի ծառայություններ.	հանրային սննդի ծառայություններ.
3	զբոսաշրջային ծառայություններ.	զբոսաշրջային ծառայություններ.
4	վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայություններ.	
5	մանրածախ առևտրի ծառայություններ, այդ թվում՝ առևտրի կենտրոնում կամ առևտրի իրականացման վայրում առք ու վաճառքի գործունեություն	
6	ցամաքային տրանսպորտի գործունեություն (երթուղային տրանսպորտ).	
7	նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ).	նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ).
8	սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ).	սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ).
9	զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն.	զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն.
10	հագուստի արտադրություն.	
11	կոշիկի և այլ կաշվե արտադրատեսակների արտադրություն.	
12	կահույքի արտադրություն.	
13	թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից և քարերից զարդերի պատրաստում.	
14	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում.	
15	օդային տրանսպորտի գործունեություն.	
16	կինոթատրոնների գործունեություն.	կինոթատրոնների գործունեություն.
17	լուսանկարչության բնագավառում գործունեություն.	լուսանկարչության բնագավառում գործունեություն.
18	ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթ.	ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթ.
19	կրթական գործունեություն մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում.	կրթական գործունեություն մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում.
20	ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն.	ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն.
21	լվացման, մաքրման և չոր մաքրման ծառայությունների մատուցում.	
22	պոլիգրաֆիական գործունեություն (տպագրության ծառայություն).	

23	առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ.	առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ:
24	մանածագործական արտադրատեսակների արտադրություն.	
25	փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն՝ բացի կահույքից.	
26	թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն.	
27	ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն.	
28	համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն.	
29	էլեկտրական սարքավորանքի արտադրություն.	
30	ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող վարչարարական և լրացուցիչ այլ գործունեություն.	
31	համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում.	
32.	ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն:	
33.		խաղատների գործունեություն.

Հավելված 2

Հ/Հ	8-րդ միջոցառում	Տուժած ոլորտ սահմանելու ամսաթիվ փոփոխության որոշման համար	Պարետի կողմից կիրառված սահմանափակման որոշում, ամսաթիվ
1.	հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ.	30.03.2020 թ. թիվ 412-Լ	17.03.2020 թ. թիվ 2
2.	հանրային սննդի ծառայություններ.	30.03.2020 թ. թիվ 412-Լ	17.03.2020 թ. թիվ 2
3.	զբոսաշրջային ծառայություններ.	30.03.2020 թ. թիվ 412-Լ	17.03.2020 թ. թիվ 2
4.	վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայություններ.	30.03.2020 թ. թիվ 412-Լ	17.03.2020 թ. թիվ 2
5.	մանրածախ առևտրի ծառայություններ, այդ թվում՝ առևտրի կենտրոնում կամ առևտրի իրականացման վայրում առք ու վաճառքի գործունեություն	30.03.2020 թ. թիվ 412-Լ	17.03.2020 թ. թիվ 2
6.	ցամաքային տրանսպորտի գործունեություն (երթուղային տրանսպորտ).	16.04.2020 թ. թիվ 558-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
7.	նախադպրոցական կրթություն (մասնավոր	16.04.2020 թ. թիվ 558-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում

	մանկապարտեզներ).		
8.	սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ).	16.04.2020 թ. թիվ 558-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
9.	զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն.	16.04.2020 թ. թիվ 558-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
10.	հագուստի արտադրություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
11.	կոշիկի և այլ կաշվե արտադրատեսակների արտադրություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
12.	կահույքի արտադրություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
13.	թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից և քարերից զարդերի պատրաստում.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
14.	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
15.	օդային տրանսպորտի գործունեություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
16.	կինոթատրոնների գործունեություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
17.	լուսանկարչության բնագավառում գործունեություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
18.	ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթ.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
19.	կրթական գործունեություն մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
20.	ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
21.	լվացման, մաքրման և չոր մաքրման ծառայությունների մատուցում.	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
22.	պոլիգրաֆիական գործունեություն (տպագրության ծառայություն).	30.04.2020թ. թիվ 646-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
23.	առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ.	7.05.2020թ. թիվ 703-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
24.	մանածագործական արտադրատեսակների	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում

	արտադրություն.		
25.	փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն՝ բացի կահույքից.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
26.	թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
27.	ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
28.	համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
29.	էլեկտրական սարքավորանքի արտադրություն.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
30.	ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող վարչարարական և լրացուցիչ այլ գործունեություն.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
31.	համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում.	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում
32.	ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն:	4.06.2020թ. թիվ 897-Լ որոշում	03.05.2020թ. թիվ 63 որոշում